ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԳՈՀԱՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի ասիստենտ
էլ. փոստ՝ g.barkhudaryan@ysu.am

ՆԱԻՐՈՒՀԻ ՋՐԲԱՇՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու,
ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի ասիստենտ
էլ. փոստ՝ nairijr@gmail.com

Սոցիալական ոլորտի ենթահամակարգերից մեկը՝ ազգային կրթահամակարգը, հոգևոր, բարոյական, մշակութային արժեքների, գիտելիքների կրողն ու փոխանցողն է՝ ելնելով անձի, հասարակության, ազգի և պետության շահերից: Արդյունավետ կրթական ծառայությունների մատուցման հիմնախնդիրը առանցքային դերակատարում ունի ՀՀ անցումային տնտեսության համար, որը պայմանավորված է, նախևառաջ, այլընտրանքային լուծումների ու հնարավորությունների խիստ սահմանափակությամբ: Մյուս կողմից, տնտեսությունը գիտելիքահենք հուն տեղափոխելու ՀՀ Կառավարության կողմից որդեգրած քաղաքականությունն իր ցանկալի արդյունքները կարող է ապահովել գիտակրթական համակարգերի համապարփակ զարգացման ու գործադրման միջոցով:

Ազգային հարստության տարրերի քննական վերլուծությունը, անկախ նրանից, թե ինչ հայտանիշներով են այդ տարրերը ձևավորվում ու սահմանազատվում, բացահայտում է կրթական բաղադրիչի վճռորոշ ազդեցությունը աշխատանքային ներուժի, աշխատանքային ռեսուրսների և մարդկային կապիտալի քանակական ու որակական բնութագրերի վրա: Բացառություն չեն նաև ազգային հաշիվների համակարգով ներկայացվող համապատասխան ցուցանիշները:

Բազմակի են փորձերը գնահատել ազգային հարստությունը ընդհանրական ինտեգրալ մեծությամբ՝ քանակապես սահմանելով արտադրական, բնական և մարդկային ռեսուրսների մասնաբաժինները: Այսպես, 2000 թ. ՀԲ նախաձեռնությամբ հաշվարկվել է ԱՄՆ ազգային հարստության բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությունը. մարդկային կապիտալ՝ 76,8%, բնական ռեսուրսներ՝ 4,2%, սոցիալ-արտադրական կառուցվածքներ՝ 19%[1]: Հետագայում հաշվարկվել է նաև

[1] Մանրամասն տե՛ս **В. Черковец**. Национальное богатство и национальный продукт с позиций общей экономической теории: ретроспектива и настоящее.//Российский экономический журнал, N 3, 2011, с. 55-69.

ազգային հարստության հիմնական բաղադրամասերի հարաբերակցությունը արտահանման առավել հումքային կողմնորոշում ունեցող տնտեսությունների կտրվածքով, որը արձանագրել է մարդկային կապիտալի մասնաբաժնի կրճատումը մինչև 59%, իսկ բնական ռեսուրսների բարձրացումը՝ մինչև 20%:

Մարդկային կապիտալի ֆենոմենը ակնհայտ է դառնում մեկ այլ դիտարկման տեսանկյունից: Քննարկելով «ինստիտուտներ-կրթություն» հարաբերությունները, որոշ հեղինակներ ցույց են տալիս, որ մարդկային կապիտալը տնտեսական աճի առավել կարևոր պատճառ է, քան ինստիտուտները, իսկ քաղաքական ինստիտուտների կատարելագործումը իրականացվում է այն բանից հետո, երբ երկիրը հաղթահարում է աղքատությունը ճշգրիտ տնտեսական քաղաքականության շնորհիվ[1]:

Մեկնվելով հայեցակարգային բերված մոտեցումներից խնդրահարույց է դառնում տնտեսական աճի վրա կրթության ազդեցության հիմնահարցը:

Մասնագիտական գրականության մեջ տնտեսական աճի մեջ կրթության ներդրման գնահատման տարբեր եղանակներ կան: Սակայն երկու հիմնական մոտեցում կա, որոնք ունեն մեթոդաբանական տարբերություններ[2]: Առաջինը՝ մշակված Թ. Շուլցի կողմից, կրթությունը դիտարկում է որպես կապիտալի առանձնահատուկ տեսակ: Ըստ այս մեթոդաբանության տնտեսական աճի արտադրական ֆունկցիայով ներկայացվող մոդելը կունենա հետևյալ տեսքը.

$$Y=BK^aL^bH^c,$$

որտեղ՝ Y-ը արտադրանքի ծավալն է, B-ն ֆունկցիայի պարամետրն է, L-ը, K-ն և H-ը՝ համապատասխանաբար աշխատանքի, ֆիզիկական և մարդկային կապիտալների ծավալներն են, a-ն, b-ն, c-ն՝ համապատասխան գործոնների առաձգականության գործակիցներն են: Այս դեպքում Թ. Շուլցի միկրոմակարդակում կրթության արդյունավետության գնահատման վերաբերյալ մեթոդիկան օգտագործվել է նաև մակրոմակարդակում կրթության ազդեցության վերլուծության համար:

Մյուս մոտեցումը մշակվել է է. Դենիսոնի կողմից, ով դիտարկում է կրթությունը որպես աշխատանքի որակական բնութագիր, իսկ կրթության ներդրումը տնտեսական աճում կապակցում է է աշխատանքի որակի բարձրացման հետ: Այս մեթոդաբանությունը ենթադրում է, որ որևէ կրթամակարդակի աշխատուժի աշխատավարձի մակարդակը և աշխատանքի արտադրողականությունը կապված չեն դրա առաջարկի դինամիկայի հետ: Այս դեպքում տնտեսական աճի մոդելը կներկայացվի հետևյալ տեսքով.

$$Y=AK^a(LE)^b=AK^aL^bE^b,$$

որտեղ E-ն աշխատուժի որակի ինդեքսն է:

---

[1] Տես **Glaeser Ed., La Porta R., Lopez-de-Silanes F., Shleifer A.** Do Institutions Cause Growth?//NBER Working Paper.2004. N 10568, ինչպես նաև՝ Т. Нахтов. Образование, социальный капитал и экономическое развитие // Вопросы экономики, N8, 2010, сс. 112-120.

[2] **М. Ольшанская**. Образование и экономический рост. В сборнике: **Т. Разумова, И. Телешова**. Образование и человеческое развитие. Москва, ТЕИС, 2000, сс. 26-35.

Հայտնի է նաև Կ. Էրոուի կողմից առաջարկվող մոտեցումը[1], երբ A(t) տեխնիկական առաջընթացը դիտարկվում է որպես աշխատանքի գործընթացում ուսուցման արդյունք, այսինքն ազդեցությունն արտահայտվում է աշխատանքի մեծացմամբ (labour-augmenting) և այն ֆունկցիա է նախկինում ձեռքբերած փորձի: Այս դեպքում արտադրական ֆունկցիան ունի հետևյալ տեսքը.

$$Y=F[K, A(t)\cdot L]$$

և, եթե $I(\tau)$-ն ներդրումներն են τ ժամանակահատվածում՝

$$A(t)=\left[\int_{-\infty}^{t} I(\tau)d\tau\right]^{\beta}, \text{ որտեղ } 0< <1 :$$

Տնտեսական աճի մոդելներում կարելի է A(t)-ն կապակցել K(t) կապիտալի ծավալի հետ, մասնավորապես՝ A(t)= K (t) տեսքով:

Արտադրական ֆունկցիաների ապարատի գործադրման միջոցով ՀՆԱ-ի ծավալի վրա կրթության ազդեցությունը ՀՀ-ում գնահատվել է հեղինակային խմբի կողմից[2], ըստ որի բացահայտվել է, որ 1998-2009 թթ. համար ՀՆԱ-ի միջին աճում գիտակրթական բաղադրիչի ազդեցությունը կազմել է 0.45%: Ընդ որում, դա այն պայմաններում, երբ ներդրումները բարձրագույն կրթության ոլորտում կազմել են ՀՆԱ-ի 0.48%-ը, մինչդեռ, օրինակ ԱՄՆ-ում այդ ցուցանիշը եղել է 2.36%, Դանիայում՝ 1.16%, Ֆինլանդիայում՝ 1.11%, Շվեդիայում՝ 0.93%, Ճապոնիայում՝ 0.83%, ՏՀԶԿ երկրներում՝ 1.42%, ԵՄ երկրներում՝ 0.79%[3]: Բերված տվյալները ակնառու վկայում են բարձրագույն կրթության ոլորտում ներդրումների անբավարար մակարդակի մասին, նկատի ունենալով, որ համեմատվող երկրներում ընդհուպ մեկ կարգով բարձր է ՀՆԱ-ի մակարդակը և, երկրորդը՝ տնտեսության ոլորտում նպատակադրումների գերակայությունները:

Կրթական ծառայությունների արդյունավետությունը կարելի է վերլուծել և քանակապես գնահատել արդյունավետության սահմանմանը համապատասխան, այսինքն, որպես արդյունքի և ծախսերի հարաբերակցություն: Սակայն, եթե կրթության ոլորտում կատարված ծախսերի գնահատումը հնարավոր է իրականացնել տարբեր տեսանկյուններից, ապա բավականին բարդ խնդիր է արդյունքի գնահատումը, քանի որ այն կրթության մատչելիության և որակի ինտեգրալ ցուցանիշ է:

Այդ իսկ պատճառով, խնդրո առարկա արդյունավետության վերլուծությունը սարկ է սկսել կրթական ծառայությունների և դրանց շուկայի առանձնահատկությունների վերլուծությունից:

---

[1] **Л. Столерю.** Равновесие и экономический рост. Москва, 1974, с. 363.

[2] **Յու. Սուվարյան, Վ. Սարգսյան, Գ. Վարդանյան,** Գիտության և կրթության ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա. «Բանբեր», ՀՊՏՀ, № 1, 2010, էջ. 7-31:

[3] Նույն տեղում, էջ 27:

Կրթական ծառայությունները ստեղծվում են գիտական աշխատանքի տարատեսակ հանդիսացող գիտամանկավարժական աշխատանքի գործընթացում, որի արդյունքը կարելի է անվանել կրթական արդյունք[1]: Կրթական արդյունքը բազմաբնույթ է, ունի և՛ հանրային և՛ մասնավոր բարիքին բնորոշ հետևյալ հատկանիշները. միաժամանակ սպառվում է բազմաթիվ սպառողների կողմից, սակայն մասնագիտական կրթության համակարգում սահմանափակ թվով անձանց կողմից այդ արդյունքի անվճար սպառումը բացառում է մյուսների կողմից անվճար սպառումը ևս[2]:

Կրթական ծառայությունը որպես բուհի գործունեության արդյունք հետևյալ տարրերի համախումբն է[3].

1. Կրթական չափորոշիչ, կրթական ծրագրեր, դասընթացների ծրագրեր և այլ փաստաթղթեր, որոնք բնութագրում են սպառողին փոխանցվող օգտակարությունը,
2. Ուսումնական գործընթացը, որպես դասավանդողի և սովորողի միջև հաղորդակցություն,
3. Ինքնակրթության պայմանները, որոնք ստեղծվում են բուհի կողմից,
4. Վկայագիրը, որը հավաստում է կրթական ծառայության ստացման փաստը և դրա սպառման որակը՝ դիպլոմի հավելվածի տեսքով,
5. Բուհի հեղինակությունը, «իմիջը»: Այն թեև չունի կրթական պահանջմունքը բավարարող ինքնուրույն սպառողական օգտակարություն, սակայն մարքետինգի տեսանկյունից կարող է հանդիսանալ բուհի արդյունքի տարր:

Կրթական ծառայությունները բավարարում են անհատի, տնտեսվարող սուբյեկտների և պետության պահանջմունքները: Այդ իսկ պատճառով կրթական ծառայությունները և դրանց արդյունավետությունը կարելի է սահմանել երեք տարբեր տեսանկյուններից.

անհատի տեսանկյունից կրթական ծառայությունը սահմանված ձևով, ծրագրով և սպառողի հետ սերտ հաղորդակցման պարագայում իրականացվող հանրակրթական և մասնագիտական բնույթի գիտելիքների, հմտությունների, կարողությունների փոխանցումն է սպառողին, որոնք անհրաժեշտ են մասնագիտության ստացման, ինքնազարգացման, ինքնահաստատման, անձնական պահանջմունքների բավարարման համար:

Տնտեսվարող սուբյեկտների տեսանկյունից կրթական ծառայությունը կադրերի մասնագիտական պատրաստման, ինչպես նաև վերապատրաստման և որակավորման բարձրացման գործընթացն է, որն անհրաժեշտ է շուկայական անընդհատ փոփոխվող պայմաններում ձեռնարկության զարգացման և մրցունակության պահպանման համար:

---

[1] **А. О. Ченцов**. О бизнесе образовательных услуг. // Высшее образование в России. № 2, 1999, с.120-123.

[2] Ըստ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի «... Յուրաքանչյուր քաղաքացի ունի **մրցութային հիմունքներով** անվճար պետական բարձրագույն և մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք՝ օրենքով սահմանված կարգով ...»:

[3] Տես **С. И. Добрыднев**, К вопросу определения продукта ВУЗА.// Маркетинг в России и зарубежом, № 4, 2004, с. 26-31. http://www.mavriz.ru/articles/2004/4/3460.html

• Պետության տեսանկյունից կրթական ծառայությունը գործընթաց է, որն ապահովում է մարդկային կապիտալի վերարտադրությունը և երկրի մտավոր ներուժի ընդլայնումը:

Կրթական ծառայությունների շուկայի առանձնահատկությունները պայմանավորված են ինչպես վերը թվարկված, այնպես էլ մի շարք այլ գործոններով, մասնավորապես՝ սոցիալական ոլորտում տնտեսական հարաբերությունների և սոցիալական ծառայությունների կազմակերպման առանձնահատկություններով, պետական կարգավորման անհրաժեշտությամբ, ձևերով և բարձր աստիճանով:

Կրթական ծառայությունների շուկայի սուբյեկտները բարձրագույն կրթության համակարգում չորսն են[1], որոնց միջև ձևավորված բազմակողմ հարաբերությունները հետևյալն են (գծապատկեր 1).

Գծապատկեր 1. *Կրթական շուկայի սուբյեկտները բարձրագույն կրթության համակարգում և դրանց փոխհարաբերությունները*



Դիտարկենք կրթական շուկայի սուբյեկտների միջև բազմակողմ հարաբերությունները և դրանց բովանդակությունը կրթական ծառայությունների արդյունավետության տեսանկյունից:

1. «Պետություն - բուհեր - սովորողներ (կադրեր)» հարաբերությունների շրջանակներում է բարձրագույն կրթության բյուջետային ֆինանսավորումը, ուսումնական գործընթացը, պետության կողմից օրենսդրորեն երաշխավորված կրթության իրավունքի իրականացումը:

Կրթություն ստանալու իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է, այն ուղղված է մարդկային կապիտալի ամրապնդմանը և մարդու կարողությունների

[1] Տնտեսագիտական գրականության մեջ որպես կրթական ծառայությունների շուկայի սուբյեկտներ նշվում են կրթական հիմնարկությունները, սպառողները (կազմակերպություններ), անհատները (սովորողները), երբեմն նաև միջնորդ կառույցները: Սակայն կարծում ենք, որ կրթական ծառայությունների շուկայի սուբյեկտ է նաև պետությունը, քանի որ այն հանդիսանում է կրթության ոլորտի զարգացման ռազմավարության և քաղաքականության մշակողը, և միաժամանակ՝ կրթական ծառայությունների պատվիրատու և սպառող:

զարգացմանը: Կրթական իրավունքի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և մեկնարկային հավասար պայմանների ապահովումը բարձրագույն մասնագիտական կրթությանը ներկայացվող պահանջներից մեկն է:

Կրթական ծառայությունների արդյունավետությունը հարաբերությունների վերը նշված շղթայում կորոշվի պետության կողմից բարձրագույն մասնագիտական կրթության մատչելիության և կրթություն ստանալու հնարավորությունների հավասարության ապահովմամբ: Անհավասարության բարձր աստիճանը կարող է դիտարկվել որպես կրթական ծառայությունների անարդյունավետություն մակրո մակարդակում կամ բարձրագույն դպրոցի անարդյունավետ գործունեություն:

Կրթության մատչելիությունը կարելի է դիտարկել մի կողմից տնային տնտեսությունների և մյուս կողմից՝ պետության կրթական ծախսերի կատարման հնարավորությունների տեսանկյուններից:

Բարձրագույն կրթության մատչելիության և դրա ստացման ֆինանսական հնարավորությունների միջև կապն ակնհայտ է, քանի որ մատչելիությունը դիտարկվում է որպես «արդյունք», որին կարելի է հասնել «վճարման հնարավորություն» գործոնի միջոցով: Ելնելով սրանից՝ միջազգային տարբեր հետազոտություններում երկրների համար հաշվարկվում են բարձրագույն կրթության մատչելիության և կրթության ստացման ֆինանսական հնարավորությունների վարկանիշներ[1]:

Կրթության իրավունքի իրականացման հնարավորությունն, ըստ եկամուտների մակարդակի, դիտարկվում է որպես սոցիալական անարդարություն: Արդարության սկզբունքի պահպանումը հավասար պայմանների ստեղծմամբ և այս եղանակով կրթության մատչելիության բարձրացումը հատկապես կարևոր են աղքատության հաղթահարման համար: Արդարության պահանջմունքը մարդու սոցիալական պահանջմունքների ելակետն է, անհատի պաշտպանված լինելու և անվտանգության պահանջմունքների հիմքը: Արդարության զգացումը կարևոր գործոն է մարդու կյանքում և ընկած է հասարակության համախմբման հիմքում: Արդարության գնահատումը թերևս հնարավոր է վիճակագրական մեթոդներով:

Վերջին տարիներին բուհերի թվի աճը կարծես թե մեծացրել է բարձրագույն կրթության ստացման հնարավորությունն ու մատչելիությունը: Սակայն բուհերի թվի և կրթական ծառայությունների ծավալի ֆորմալ աճը արդյո՞ք մեծացրել է բարձրագույն կրթության մատչելիությունը և հատկապես սոցիալական ո՞ր խմբերի համար:

Հայաստանում առկա է որակյալ կրթություն ունեցող մարդկային ռեսուրս: Համաձայն ՀՀ ԱՎԾ-ի տվյալների, տարրական կրթություն չունեցողներն ու թերի տարրական կրթություն ունեցողները կազմում են 10 և ավելի տարեկան ՀՀ

[1]Տես **A. Asher, A. Cervenan**. Global Higher Education Rankings: Affordability and Accessibility in Comparative Perspective. Toronto: The Educational Policy Institute, 2005.

բնակչության ընդամենը 1.6%-ը, իսկ 15 տարեկանից բարձր տարիքային խմբի բնակչության շուրջ 39%-ն ունի որևէ մակարդակի մասնագիտական կրթություն[1]: Սակայն մասնագիտական կրթական ծրագրերում (նախնական, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրեր) համախառն ընդգրկվածության ցուցանիշը 2009 թ. կազմել է շուրջ 32%[2]: Չնայած այն փաստին, որ 2001 թ. վեր մասնագիտական կրթական ծրագրերում ընդգրկվածության ցուցանիշները Հայաստանում մշտապես աճել են, սակայն դրանք ցածր են մնում ԿԱԵ և ԱՊՀ երկրների ցուցանիշների համեմատությամբ (ըստ 2004 թ. տվյալների՝ ԿԱԵ ու ՆԽՄ երկրներում՝ 43%):

Հետազոտությունները ցույց են տալիս, որ չնայած հանրակրթության մակարդակում բնակչության տարբեր խավերի ընդգրկվածությունը հիմնականում համասեռ է, սակայն արդեն մասնագիտական կրթական ծրագրերում, այդ թվում նաև բուհական կրթահամակարգում, ընդգրկվածության ցուցանիշներն էապես անհավասար են աղքատ և ոչ աղքատ խավերի համար: Աղքատների ընդգրկվածությունը մասնագիտական կրթական համակարգում 3.7 անգամ ավելի ցածր է ոչ աղքատ բնակչության համապատասխան ցուցանիշների համեմատ, և այս երևույթի հիմնական պատճառը բարձրագույն կրթության մատչելիության/հասանելիության չափազանց ցածր աստիճանն է աղքատների համար[3]: Նկատի ունենալով երկրում աղքատության բավականին բարձր մակարդակն ու հետճգնաժամային շրջանում դրա փաստացի աճը (2009 թ.՝ 34.1%, իսկ 2010 թ.՝ 35.8 %), կարծում ենք, որ կրթական անհավասարության ցուցանիշների վերհանումը մեր երկրում առանցքային հիմնախնդիրների շարքում է, որը պայմանավորված է երկարատև կայուն տնտեսական աճի վրա մտավոր ներուժի հետգործունեության ազդեցության կարևորությամբ:

Միջազգային փորձն առաջարկում է կրթության տարբեր ասպեկտների չափման ու համադրման բազմազան ցուցիչներ, որոնցից են կրթահամակարգի տարբեր մակարդակներում ընդգրկվածությունը, կրթության ոլորտում պետական ծախսերի մասնաբաժինը, կրթական միջին մակարդակը, կրթության որակը գնահատող համակարգերը և այլն: Դրանցից մեկն է նաև կրթության անհավասարությունը գնահատելու համար տարբեր հեղինակների կողմից լայն կիրառություն գտած կրթության անհավասարության Ջինիի գործակիցը, որը բնութագրում է

---

[1] Աղբյուրը՝ հաշվարկվել է ՀՀ ԱԿԾ կողմից 2009 թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալների հիման վրա: Ներառվել են նախնական, միջին մասնագիտական, ինչպես նաև բարձրագույն ու հետբուհական կրթություն ունեցողները:

[2] Աղբյուրը՝ հաշվարկվել է ՀՀ ԱԿԾ կողմից 2009 թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալների հիման վրա: Ներառվել են համապատասխան տարիքային խմբում նախնական, միջին մասնագիտական, ինչպես նաև բարձրագույն ու հետբուհական կրթական ծրագրերում ընդգրկվածները:

[3] Տե՛ս «Կայուն զարգացման ծրագիր», Երևան, 2008, էջ 257:

բնակչության կրթամակարդակների (սովորաբար դրա տակ նկատի են ունենում սովորած տարիների քանակը) բաշխման հարաբերական անհավասարությունը[1]:

Հղված ուսումնասիրությունների արդյունքների համեմատությունները տարբեր երկրների համար բացահայտել են հետևյալ օրինաչափությունները.

- երկրում բնակչության միջին կրթամակարդակը (սովորած տարիների միջին քանակը) հակադարձ կախվածության մեջ է կրթության Ջինիի գործակցի հետ, այսինքն, որքան բարձր է բնակչության միջին կրթամակարդակը տվյալ երկրում, այնքան ցածր է կրթական անհավասարությունը,
- կրթության անհավասարությունը բնութագրող Ջինիի գործակիցը հակադարձ կախվածության մեջ է երկրում շնչային ՀՆԱ-ի ցուցանիշի հետ, այսինքն, որքան փոքր է կրթության անհավասարությունը տվյալ երկրում և հետևապես՝ բարձր բնակչության միջին կրթամակարդակը, այնքան մեծ է շնչային ՀՆԱ-ն:

Հիմնվելով կրթության Ջինիի գործակցի հաշվարկման կիրառվող հատուկ մեթոդաբանության և ՀՀ ԱՎԾ-ի կողմից 2009 թ. իրականացված «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության» տվյալների վրա, գնահատվել է կրթության անհավասարության Ջինիի գործակիցը Հայաստանում: Վերջինիս գնահատման առաջին փորձը կատարվել է 2002 թ.[2]: Նույն մեթոդաբանության կիրառմամբ այն գնահատվել է նաև 2009 թ. համար՝ վեր հանելով որոշակի միտումներ ժամանակի մեջ:

Կրթության անհավասարության հաշվարկի (2002 թ.) հիմքում ընկած են եղել ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից իրականացված «Կրթությունը, աղքատությունը և տնտեսական ակտիվությունը Հայաստանում» հետազոտության մեջ ընդգրկված բնակչության սովորած տարիների քանակի փաստացի նշումները: Հաշվարկվել են հետազոտված տնային տնտեսությունների 10 և ավելի տարեկան անդամների սովորած տարիների միջին քանակները՝ կրթամակարդակի յուրաքանչյուր աստիճանի համար: Այդ մեթոդական մոտեցումներն ու արդյունքներն օգտագործվել են նաև 2009 թ. կրթական անհավասարության հաշվարկների իրականացման համար: Ընդ որում, սովորած տարիների քանակի ցուցանիշն ընդգրկել է ուսումը ոչ միայն կրթահամակարգի պաշտոնապես ընդունված տարբեր օղակներում (դպրոց, տեխնիկում/քոլեջ, միջին մասնագիտական ուսումնա-

---

[1] Տե՛ս "Measuring Education Inequality: Gini Coefficients of Education", T. Vinod,Y. Wang, X. Fan, WBI, 2001.

"Education and Earnings Inequality in Mexico", Ulrich Lachler, WB, 1998.

"Education, Earnings and Inequality in Brazil, 1982-98", A. Blom, L. Holm-Niesen, D. Verner, WB, 2001.

"A New Dataset on Inequality in Education: Gini and Theil Indices of Schooling for 140 Countries, 1960-2000", T. Vinod, Y.Wang, X. Fan, WB, 2002.

„Inequality in Education: Comparative and International Perspectives„, **Donald B. Holsinger, W. James Jacob**, Springer, 2009.

[2] Տե՛ս «Կրթությունը, աղքատությունը և տնտեսական ակտիվությունը Հայաստանում», ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակ, Երևան, 2002:

կան հաստատություն, ԲՈՒՀ), այլև լրացուցիչ կրթության և կրթության ոչ պաշտոնական օղակներում՝ առարկայական դասընթացներ, մասնավոր պարապմունքներ, մասնագիտության (այդ թվում արհեստների) ձեռքբերման ու խորացման դասընթացներ: Սովորած տարիների միջին քանակն ըստ կրթամակարդակների՝ տարածված 2009 թ. տնային տնտեսությունների հետազոտությամբ ընդգրկված 10 և ավելի տարեկան բնակչության վրա, ունեցել է հետևյալ պատկերը (աղյուսակ 1).

Աղյուսակ 1.

Հետազոտված 10 և ավելի տարեկան բնակչության պաշտոնական ու ոչ պաշտոնական կրթական օղակներում սովորած տարիների միջին քանակների գնահատականներն ըստ կրթամակարդակների

Կրթամակարդակներ	Պաշտոնական ու ոչ պաշտոնական կրթական օղակներում սովորած տարիների միջինը (տարի)՝ ըստ 2002 թ. հետազոտության	Պաշտոնական ու ոչ պաշտոնական կրթական օղակներում սովորած տարիների միջինը (տարի)՝ տարածված 2009 թ. տվյալների վրա	Տեսակարար կշիռը 10 և ավելի տարեկանների ընդհանուր թվում (%)՝ ըստ տնային տնտեսությունների 2009 թ. հետազոտության
Չունեն լրիվ տարրական	4.0	4.0	1.6
Տարրական	6.8	6.8	11.0
Հիմնական	8.2	8.2	11.8
Լրիվ միջնակարգ	10.3	10.3	40.1
Նախնական մասնագիտական	11.7	11.7	2.4
Միջին մասնագիտական	12.4	12.4	17.8
Թերի բարձրագույն	13.3	13.3	1.8
Բարձրագույն	15.3	15.3	13.4
Հետբուհական	16.3	16.3	0.2
Ընդամենը	11.2	10.7	100.0

Աղբյուրը՝ *«Կրթությունը, աղքատությունը և տնտեսական ակտիվությունը Հայաստանում», ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակ, Երևան, 2002, և ՀՀ ԱՎԾ կողմից 2009 թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալների հաշվարկներ:*

Ըստ ստացված արդյունքների, 2002-2009 թթ. ընթացքում նշված տարիքային խմբի բնակչության սովորած տարիների միջին քանակը փոքր ինչ կրճատվել է, կազմելով 10.7 տարի՝ 2002 թ. 11.2-ի դիմաց:

Ելնելով նկարագրվածից, հաշվարկվել է կրթության անհավասարության Ջինիի գործակիցը և կառուցվել *կրթության անհավասարության Լորենցի կորը՝ հիմնվելով միջազգայնորեն ընդունված մեթոդաբանության վրա:*

Ջինիի գործակիցը հաշվարկվել է հետևյալ բանաձևով[1]՝

[1] Տես "Measuring Education Inequality: Gini Coefficients of Education", **T. Vinod, Y. Wang, X. Fan**, WBI, 2001, էջ 7:

$$Gini_{Ed} = \left(\frac{N}{N-1}\right)\cdot\left[\frac{1}{\mu}\sum_{i=2}^{n}\sum_{j=1}^{i-1} p_i\left|y_i - y_j\right|p_j\right],$$

որտեղ N-ը հետազոտված 10 և ավելի տարեկան բնակչության թիվն է, μ -ն՝ նրանց սովորած տարիների միջին քանակը, p_i և p_j-ն՝ տվյալ կրթամակարդակն ունեցող բնակչության տեսակարար կշիռը, y_i-ն և y_j-ն՝ տվյալ կրթամակարդակն ունեցողների սովորած տարիների միջին քանակը:

Ըստ ստացված արդյունքների, 2009 թ. 10 և ավելի տարեկան բնակչության կրթության անհավասարությունը բավականին փոքր է, սակայն դրսևորել է աճի փոքր միտում, Ջինիի գործակիցը կազմել է ընդամենը 0.2՝ 2002 թ. 0.15-ի դիմաց: Այս արդյունքների համադրումը տարբեր երկրների համար կրթության անհավասարության Ջինիի գործակցի ու սովորած տարիների միջին քանակի փոխադարձ կախվածությունների տվյալների հետ վկայում է, որ Հայաստանը գտնվում է բավականին բարենպաստ դիրքում, այնպիսի երկրների կողքին, ինչպիսիք են Կանադան, Գերմանիան, Ավստրիան[1]: Սակայն, կրթության փոքր անհավասարության պայմաններում եկամուտների անհավասարության Ջինիի գործակիցը ըստ 2010 թ. հանրապետությունում անցկացված տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտության արդյունքների[2], բավականաչափ բարձր է՝ 0.36:

Նշենք, որ կրթության Ջինիի գործակիցը 10 և ավելի տարեկանների համար իր մեջ կրում է դեռևս խորհրդային ժամանակաշրջանի՝ սոցիալական տարբեր խավերի համար հավասարապես մատչելի կրթական համակարգի տարբեր օղակներում կրթություն ստացածներին: 90-ական թվականներից առաջ կրթություն ստացածները և իրենց կրթությունն ավարտածները կազմում են այս համախմբության շուրջ կեսը: Թերևս այդ պատճառով է, որ կրթության անհավասարությունը այս տարիքային խմբի համար բավականին փոքր է:

2. «Պետություն - սովորողներ (կադրեր) - տնտեսվարող սուբյեկտներ» հարաբերությունների շղթան ներառում է աշխատաշուկայում մասնագետների պահանջված լինելը և մրցունակությունը, նրանց սոցիալական ապահովվածությունը: Պետությունը հանդես է գալիս որպես կրթության որակի երաշխավոր:

Կրթական ծառայությունների արդյունավետությունը հարաբերությունների այս շղթայում կորոշվի մատուցված ծառայությունների որակով: Բարձրագույն կրթության որակի՝ որպես նպատակի և արդյունքի հարաբերակցության ապահովումը և գնահատումը ներկայում ազգային կրթահամակարգի ամենաբարդ խնդիրներից է: Այս ոլորտում որակը չի կարող գնահատվել միայն մաթեմատիկական և վիճա-

[1] Տե՛ս "Measuring Education Inequality: Gini Coefficients of Education", T. Vinod,Y. Wang, X. Fan, WBI, 2001, էջ 17:

[2] Տե՛ս «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», ՀՀ ԱՎԾ, Երևան, 2011, էջ 58:

կագրական մեթոդներով և անհրաժեշտ է հիմնախնդրի դիտարկումը մանկավարժական, սոցիալական և տնտեսագիտական առումներով:

Դժվար է հստակ գնահատել կրթության որակը: Դրան բնորոշ են որակի գնահատման, անկախ բնագավառից, բոլոր բարդությունները, որոնք տվյալ դեպքում բխում են սպառողների և կրթական ծառայություններ մատուցողների կողմից որակի տարբեր մեկնաբանություններից, ինչպես նաև որակն ապահովող գործոնների բնույթից:

Կրթական ծառայության որակը սպառողական հատկությունների ամբողջությունն է, որն ապահովում է մարդկանց ճանաչողական պահանջմունքների առանձնահատուկ տեսակի՝ կրթական պահանջմունքների համակողմանի բավարարման հնարավորությունը: Գործածության մեջ են ուսուցման որակ և կրթության որակ տերմինները: Ուսուցման որակը գնահատում է ուսումնական գործընթացի արդյունքը և կախված է բուհի նյութատեխնիկական ապահովվածությունից, ուսումնամեթոդական գործընթացներից, պրոֆեսորադասախոսական կազմից և բուհի ինտելեկտուալ ներուժից, ինչպես նաև սովորողներից: Կրթության որակն ավելի ընդգրկուն հասկացություն է և բուհի մրցունակության գլխավոր պայմաններից մեկն է, ներառում է սպառողական, տնտեսական և կազմակերպական ցուցանիշներ: Այն հաշվի է առնում նաև բուհի պատրաստած մասնագետների պահանջվածությունը աշխատաշուկայում, նրանց տրված գնահատականը գործատուների կողմից: Այսինքն, կրթության որակը նաև սոցիալական կատեգորիա է, որն արտահայտում է անհատի՝ որպես մասնագետի դրսևորման և կայացման աստիճանը և հասարակության բավարարվածության աստիճանը մատուցված կրթական ծառայություններից:

ՀՀ-ում որակի գնահատումը (ատեստավորումը) բարձրագույն ուսումնական հաստատության մասնագիտությունների, կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների, անձնակազմի և կառուցվածքի արդյունավետության գնահատումն է, իսկ որակի ապահովումը՝ պետական կրթական չափորոշիչներին և հավատարմագրման չափանիշներին կրթության որակի համապատասխանության և բարելավման անընդհատ գործընթացը[1]: Համաշխարհային տնտեսական ֆորումը գլոբալ մրցունակության ամենամյա զեկույցներում կրթահամակարգի որակը գնահատում է մրցունակ տնտեսության պահանջները բավարարելու տեսանկյունից[2]: Նշված գնահատման համաձայն ՀՀ-ն 3.2 միավորով 97-րդն է 142 երկրի շարքում, զիջելով Շվեյցարիային (5.9/1)[3], Սինգապուրին (5.9/2), Ֆինլանդիային (5.9/3), Կանադային (5.4/7), Ֆրանսիային (4.5/34), Գերմանիային (4.9/17), Մեծ Բրիտանիային (4.8/20), ԱՄՆ-ին (4.7/26), ՌԴ-ին (3.4/82) և գերազանցելով Ադրբեջանին (3.0/113), Վրաստանին (3.0/116), Հունաստանին (2.9/120) և այլն[4]:

---

[1] ՀՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», հոդված 2:

[2] Գնահատման համակարգում առավելագույն միավորը 7-ն է, որի դեպքում կրթահամակարգը բավարարում է մրցունակ տնտեսության պահանջները:

[3] 1-ին թիվը ցույց է տալիս երկրի ցուցանիշը, 2-րդը՝ գրաված տեղը հետազոտված 142 երկրի շարքում:

[4] The Global Competitiveness Report 2011-2012. World Economic Forum, Geneva, 2011.

3. «Պետություն - բուհեր - տնտեսվարող սուբյեկտներ» հարաբերությունների շղթան ներառում է տնտեսությունը և գիտությունը մասնագիտական կադրերով ապահովումը:

Բարձրագույն կրթության պլանավորումը և աշխատաշուկայի հագեցվածության օպտիմալ աստիճանի որոշումը կրթահամակարգի հիմնախնդիրներից է: Այն ներառում է մասնագիտությունների ցանկի և գերակա մասնագիտությունների որոշումը՝ տնտեսության ճյուղերի և գիտության ուղղությունների գերակայությունների հիման վրա, կանխատեսման սկզբունքների մշակումը:

Կրթական ծառայությունների արդյունավետությունը հարաբերությունների այս շղթայում կորոշվի աշխատաշուկայի որակյալ մասնագետներով հագեցվածության, արդյունավետ տնտեսությունում կադրերի նկատմամբ պահանջարկի բավարարման համալիր ցուցանիշներով[1]:

4. «Բուհեր - սովորողներ (կադրեր) - տնտեսվարող սուբյեկտներ» հարաբերությունների շղթան ներառում է տնտեսվարող սուբյեկտների կողմից մասնագետների պատրաստման պատվերների տեղաբաշխումը և համապատասխան կրթության ֆինանսավորումը:

Կրթական ծառայությունների արդյունավետությունը հարաբերությունների այս շղթայում կդիտարկվի միկրո մակարդակում և կորոշվի բուհերի գործունեության արդյունավետությամբ և մրցունակությամբ:

Կրթական ծառայությունների արդյունավետության բարձրացման հիմնահարցերի խոր քննական վերլուծությունը վերը թվարկված ուղղություններով կրթական ներուժի մեծացման առումով իր նպաստը կբերի ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացմանը և գիտելիքի ու մարդկային կապիտալի վրա հիմնված տնտեսության կայացմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ տնտեսությունը գիտելիքահենք հուն տեղափոխելու առումով արդյունավետ կրթական ծառայությունների մատուցման հիմնահարցն առանցքային է:

Դիտարկվել են տնտեսական աճի վրա կրթության ազդեցության տարբեր մոտեցումներ և մոդելներ: Բարձրագույն կրթության ոլորտում կրթական ծառայությունների արդյունավետության հիմնահարցերը քննարկվել են կրթական շուկայի սուբյեկտների՝ պետության, բուհերի, սովորողների և տնտեսվարող սուբյեկտների միջև բազմակողմ հարաբերությունների համատեքստում: Որպես կրթական ծառայությունների արդյունավետության ցուցանիշ քննարկվել է բարձրագույն մասնագիտական կրթության մատչելիությունը և կրթության ստանալու հնարավորությունների հավասարության ապահովումը: ՀՀ-ում կրթության անհավասարությունը գնահատելու համար հաշվարկվել է Ջինիի գործակիցը:

---

[1] Տնտեսագիտական կրթության արդի առանձնահատկությունների ու կադրերի պատրաստման հիմնահարցերը քննարկված են հետևյալ հոդվածում՝ Գ. Սարգսյան, Լ. Կազարյան, Գ. Բարխուդարյան. Некоторые аспекты повышения качества экономических образовательных услуг. Собрание материалов международной научной конференции "Университетское образование в XXI в." (1-4 октября, 2009) посвященной 90-летию Ереванского Государственного Университета. Ереван, изд. ЕГУ, 2010, сс. 91-98.

АННОТАЦИЯ

Г. БАРХУДАРЯН, Н. ДЖРБАШЯН – ПРОБЛЕМЫ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ УСЛУГ В ПЕРЕХОДНОЙ ЭКОНОМИКЕ РА

Проблема предоставления эффективных образовательных услуг в РА является основополагающей в аспекте перехода к экономике, основанной на знаниях.

Рассмотрены разные методы и модели влияния образования на экономический рост. Проблемы эффективности образовательных услуг в сфере высшего образования обсуждены в контексте разносторонних отношений субъектов образовательного рынка: государства, вузов, обучающихся и хозяйствующих субъектов. В качестве показателя эффективности образовательных услуг обсуждается доступность и равенство возможностей получения образования. Для оценки неравенства в сфере образования в РА рассчитан коэффициент Джини.

SUMMARY

G. BARKHUDARYAN, N. JRBASHYAN – THE MAIN ISSUES OF INCREASING THE EFFICIENCY OF EDUCATIONAL SERVICES IN THE TRANSITIONAL ECONOMY OF RA

The issue of providing efficient educational service has a great importance in the sense of shifting the economy of RA to a knowledge-based route.

Different approaches and models of the effects of education on the economic growth are discussed in this article. Efficiency issues of the provision of the educational services in the field of higher education are discussed in the context of multilateral interrelations between different participants of the educational market (e.g. state, universities, students, companies). The problem of providing equal opportunities for education and accessibility of higher education is discussed as efficiency indicator for educational services. In order to estimate the inequality of education in RA the Gini index is calculated.